ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ. ՆԻՒ ԵՈՐՔ, ՅՈՒԼԻՍ 1, 1895. ԹԻՒ 12 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 99

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West, 23d St., New York N. Y. Vol. V, 1895.

ԲԱՐԵԿԱՄ ՀԱՅՈՑ

ՕՐ. ԷԼԻՍ ՍԹՈՆ ՊԼԷՔՎՈՒԷԼ



MISS ALICE STONE BLAQKWELL

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.

կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն Ֆրանք
Կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատկեր Օր. Էլիս Սթօն Պլէքուելի— Խմբագրական Նշմարք—. Նամակ Կ. Պոլսէ.—Նամակ Կ. Պոլսէ.— Բնագիր բարեկարգութեան Ծրագրին.— Ներկայ Ստիպողական Պարտքն. Ե. Կազմակերպութիւն.— Բարեկամք Հայոց և Հայ Գրականութիւն.— ՄՇԱԿի մէկ խմբագրականն ի մասին ամերիկայի Հայոց.— Ամերիկայի Հայոց Ցառաջդիմութիւնն.— Խմբագրական Յայտարարութիւն.— Նիւ Եորքի Հայոց մէջ.— Այլևայլք

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

MISS ALICE STONE BLACKWELLի պատկերն, որ կը զարդարէ ՀԱՅԿԻ ներկայ թուոյ ճակատն, խորին գոհութեամբ պիտի դիտեն բոլոր հայրենասէրք իբրեւ զմիոյն ի ճարտարագոյն ախոյեանից հայ դատին։ Օրիորդ ԷԼԻՍ ՍԹՕՆ ՊԼԷՔՈՒԷԼ արդէն քաջ ծանօթ է մեր ընթերցողաց։ Նորա անունն այս անգամ, զոյգ ընդ Տիկին ՊԱՐՈՉԻ, կուգայ հայ աշխարհի առջեւ, հրաւէրին առթիւ զոր կուղղեն հայ գրագիտաց։ Մեր ամերիկացի բարեկամք կ'ուզեն զմեր գրականութիւնն ծանօթացուցանել անգլիախօս աշխարհին, և առ այս կը խնդրեն ձեռնհասից աջակցութիւնն յորոշել և ի թարգմանել յանգլիերէն հայ հանճարի հին և նոր լաւագոյն արտադրութիւնքն։ Անշուշտ հրաւէրն երախտագէտ և փութաջան ընդունելութիւն պիտի գտնէ յազգիս։

***

Ամերիկայի Հայք, մասնաւորապէս Ուստերինք, ուրախութեամբ իմացած լինելով Տ. ԵՂՆԻԿ եպ. Ապահունեաց արձակումն, կ'ուզեն իրենց հովիւ ունենալ ըզնա։ Զրոյց կայ թէ առ այս դիմում մ'անելու վերայ են առ պատրիարքարանն։

***

Յունիս 28ի հեռագիրն կը ծանուցանէ թէ երիք դեսպանք պնդեր են որ Բ. Դուռն նշանակէ թէ ծրագրին ո՞ր կետերուն վերայ վիճաբանիլ կ'ուզէ։ Թիւրքան փաշայի, Արտաքին Գործոց Նոր Նախարարի, պատասխանն անգոհացուցիչ եղած է։ Յունիս 29ին ալ կը հեռագրեն թէ Շաքիր փաշա կայսերական յանձնակատար անուանուեր է հայկական բարեկարգութեան համար, տիտղոսն ունելով «կայսերական տեսուչ ասիական գաւառաց» բայց ոչ գործադրական իշխանութիւն։

Խայտառակութիւնն սկսած է ուրեմն. երեք տէրութիւնք սկսած են Դրան առջև խոնարհիլ։ Նախ կը յայտարարէին թէ վիճաբանութիւն չեն ընդունիր, այլ ծրագրի անփոփոխ որդեգրումն, և այժմ կը կը խնդրեն որ ցուցնէ դուռն թէ որ կետերն վիճելի կը գտնէ։

Այնպէս կ'երեւի թէ Հայաստանի ազատութեան համար մեր արդար յոյս և ակնկալութիւն ի դերեւ պիտի ելնեն նաև այս անգամ։ Հարկ պիտի լինի յեղափոխել և մեծամեծ զոհողութիւններ անել։ Այս մասին մեր խմբագրականն, ի չգոյէ տեղւոյ, ստիպուած եմք թողուլ յաջորդ թուոյ։

Եթէ շահեկան նիւթոց ահագին առատութեան համեմատ շարժէինք, պէտք պիտի լինէր շաբաթն մէկ կամ երկու անգամ հրատարակել զՀԱՅԿ, իսկ եթէ եկամտի սակաւութեան համեմատ շարժէինք, ամիսն հազիւ միանգամ պէտք է ի լոյս ելնէր այս հանդէս։

***

ԴՐՕՇԱԿի խմբագրութիւնն կարեւոր համարած է խնդրել որ ՀԱՅԿ ծանուցանէ թէ այն խորագիրն «Կեդրոնացման Պէտքն Հայաստանի Մէջ Գործողներէն Զգացուած» զոր դրած էինք ԴՐՕՇԱԿէն առնուած նամակի վերեւ, ՀԱՅԿԻ խմբագրութեանն էր, ոչ թէ ԴՐՕՇԱԿի։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

(Մեր յատուկ թղթակցէն)

Կ. Պոլիս, Յունիս 1, 1895

Պալատի մէջ գործող աւագանեաց ժողովն դրժած է ծրագիրն, նոյնն ըրած է պետական ժողովն, յորում ամէնէ աւելի ծրագրոյն դէմ խօսողն եղած է Նուրեան էֆ. :

Սուլթանն մաքսերու տեսչութեան խորհրդական Պէրթրան անուն Գերմանացին ղրկեց առ կայսրն Գերմանիոյ իւր մի ինքնագիր նամակաւն որով կը խնդրէր նորա միջամտութիւնն առ Զարն, զի չհեւսի Անգլիոյ, և չպնդէ ծրագրոյն մասին զոր աւագանեաց և պետական ժողովներն դրժած են: Կայսրն պատասխանած է թէ իւր երկրի մէջ իսկ կնքեալ դաշնագրի մը ինչ ինչ մասերու գործադրութիւնն պահանջող կառավարութեանց մօտ ոչէ միջամտութիւն չի կրնար ընել: Սուլթանն կը յուսահատի, և կը ծանուցանէ դեսպանաց թէ նախարարքն չկրցին համաձայնիլ իմաստին ծրագրոյն: Ուստի պիտի հրաժարին և յետ պայրամի կազմեալ նախարարութիւնն պիտի փութայ պատասխանել: Դեսպանք կը պատասխանեն թէ, իրենց կառավարութենէն հրաման ընդունած են՝ ծրագրոյն պատասխանն հաղորդել Յունիս 1ին (ն. տ.): Մինչ Սուլթանն այս ճգնաժամուն մէջ էր, լուր կը հասնի թէ՝ Իսլամ խուժանն Ճիտտէի եւրոպական հիւպատոսարաններու վրայ յարձակելով սպաննած է Անգլիոյ հիւպատոսն (որ հնդիկ իսլամ մ'է եղեր) և վիրաւորած է Ֆռանսայի և Ռուսիոյ հիւպատոսներն:

Մուշէն կը ծանուցանեն թէ՝ Թուրք կառավարութիւնն Սասունի եւրոպական քննիչ յանձնաժողովէն ուզած է նոցա թարգման Մանուկ անուն հայազգի, քննիչք կը մերժեն: Տեղական կառավարութեան դրդմամբ Թուրք խուժանն կը յարձակի քննիչներու բնակարանն և կ'առնէ Մանուկն: Այս լուրեր տեղւոյս դեսպանք կը հաղորդեն իրենց կառավարութեանց, յորոց ընդունուած հրահանգի համաձայն կը հեռագրեն Միջերկրականի նաւատորմիղներուն որպէս զի մի մասն կարմիր ծովն երթայ և միւսն Կ. Պոլսոյ մօտենայ:

Սուլթանն զայս լսելով երէկ գիշեր լուր կը ղրկէ դեսպանաց թէ՝ ծրագիրն սկզբամբ ընդունուած է, գրաւոր պատասխանն քանի օրէն պիտի տրուի:

Այս յուզմանց մէջ Թուրք արժէթղթերն մեծ ելևէջներ կ'ընեն:

Կ'ըսուի թէ Զէվէր Պէյի (կրօնից տեսուչ), Լէպիպ էֆ.ի (ընդհանուր դատախազ), Սէլիմ Մէլհումէի (երկրագործութեան նախարար) և Նուրեան էֆէնտիի (Շուրայի Տէվլէթի անդամ) առաջարկուած է բարեկարգելի գաւառաց կառավարչութեան, որոց առաջին երեքն մերժած են:

Երբեմն Ա. Արփիարի ապտակն ուտող Նուրեանն՝ չնորհիւ իւր թրքամոլութեան՝ իբր կառավարիչ կ'առաջարկուի, և «պալի» աստիճան ընդունեց երէկ:

Ֆուատ փաշա Ռուսիոյ կայսեր գահակալութեան առթիւ փեդրպուրկ գնացած ատեն Զարն իրեն ըսած է թէ՝«ուրախ եմ որ Սուլթանն քեզ նման լուսաւորեալ անձ մը ղրկեց իմ մօտ: Եթէ ձեզ նման անձնաւորութեանց յանձնէ երկրի ղեկն, մեծապէս կը նպաստէ օսմ. կայսրութեան: Խնդրեմ ըսէք Սուլթանին որ Ձեզ նման անձանց ձեռօք բարեփոխէ Փոքր Ասիոյ դատական և վարչական պաշտօնէութիւնը զայդ կը պահանջեն իւր շահերն:» Ֆուատ ըսած է զայս Սուլթանին և աւագանեաց, և յորդորած է որ հետևին Զարին առաջարկութեանց: Այժմ Ֆուատ իւր բանից չանսալին երեսնուն կուտայ, և այս խնդրոյ աղագաւ Ֆուատ և Օսման փաշաներն երէկ կռուած են նոյն իսկ պալատին մէջ:

Պալատին մէջ սեծ յուզում կը տիրէ. ներքինի մը Սուլթանի սենեակէն ներս մտած է նմա փնտռելու մտօք. սենեկապետք հազիւ կը հասնին: Այդ խափշիկն կախուած է: Սուլթանն հիւանդ է:

Դեսպանք երէկ Պատրիարք Հօր յանձնած են ծրագիրն որ 40 յօդուածներէ կը բաղկանայ: Պարտականութիւնն գաղտնի կը պահուի:

Հնդիկ Իսլամներն Թագուհիէն խնդրած են որ Հայոց տրուելիք առանձնաշնորհումներն իրենց ալ ըլլան:

Անչուշտ իմացաք թէ Զարին խնդրանօք Վեհափառն մասնաւոր կառախմբով Փեդրպուրկ ճամբայ ելեր է:

Ռուսիոյ Զարին Սասունի ի նպաստ տուած 1,500 ոսկւոյ 200ն միայն ժողովրդեան բաժնուած է, մնացեալն կուսակա-

լը իրացուցած է։ Ժողովուրդն դատ բացած է։

Երկու օր առաջ բանտարկեալ 12 կրօնաւորներ ևս ազատեցան։

Ազգ. Հիւանդանոցի տօնին առթիւ չափազանցութեան գնացողներ եղան, որպէս կտրեցին հիւանդանոցի վրայ ծածանուող օսմանեան դրօշակի չուանն, թքին զինուորի մը երեսն, անպատուեցին մօլլա մը որոյ վասն 30ի չափ անձինք բանտարկուեցան։

ԾՈՎ

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷ

Կ. Պոլիս Յունիս 12 1895

Յունիս 1ին Սուլթանն փոխանակ հայրենական գաւառաց բարեկարգութեան համար իրեն ներկայացուած ծրագրոյն վճռական պատասխան մը տալու. հաղորդեց անգլիական հիւպատոսին թէ՝ համայն Թուրքիոյ բարեկարգութեան պէտքն կը գայ, ինչ հարկ միայն մի քանի գաւառաց բարեկարգութեան ջանալ։ Անգլիոյ դեսպանն Ռուսիոյ և Ֆռանսայի դեսպանաց հետ միաձայնութեամբ կը պատասխանեն թէ՝ վճռական պատասխան մը կ'ուզեն, գայդ կը պահանջեն իրենց կառավարութիւններն։ Սուլթանն իւր նախարարաց անհամաձայն ըլլալն առարկելով կը խոստանայ յետ Պայրամի փոխել նախարարութիւնն և պատասխանել։ Պայրամն անցաւ և Սուլթանն Սախտ փաշան Մեծ Եպարքոս և Թուրխան փաշան արտաքին գործոց նախարար կարգեց և միւսներն իրենց պաշտօնի մէջ հաստատեց։ Ծանօթ են անշուշտ Զեզ այս երկու կրօնամոլ Թրքերու հայատեացութիւնն։ Անմիջապէս նախարարական ժողովն գործի սկսաւ, և կարծեցին խնդրոյն լուծում մը տալ առարկելով թէ՝ Թուրքիոյ ներկայ վիճակն Պէրլինի վեհաժողովոյն 6 կառավարութեանց հաւանութեամբ որոշուած է, ուստի և սոցա միայն 3ին մի տարբեր ծրագրով չի կրնար իրաց ընթացքն փոխել։ Մինչդեռ առ այս կը խորհրդակցէին, դեսպաններ իրարու հետ տեսակցութիւններ ունեցան և կրցան հասկցնել թէ այժմ 6 մեծ տէրութիւնք համաձայն են իրենց ծրագրոյն։ Պալատի մէջ կազմուած մասնաւոր ժողովն խորհելով խորհի, չի պատասխաներ, սակայն կ'ըսուի թէ կրկին դիմումներ կ'ընեն Գերմանիոյ և Աւստրիոյ կայսերաց։ Դեսպանք իրենց կառավարութիւններէն այսօր հրահանգներ կ'ըսպասեն.

Պէրութի առջեւ համախմբուած Եւրոպական նաւատորմիղի մի մասն՝ դէպ Իզմիր, միւսն դէպ Սելանիկ ուղղուած են, և կարելի է հասած իսկ։ Հաւանականաբար նաւատորմիղն մինչև որ Պոլսոյ չմօտենայ, Թուրքերն որոշ պատասխան մը չպիտի տան։

Քուրդ Պէյեր իմանալով ծրագրոյն ներկայացուիլն և զիրենք զինաթափ ընելու առաջարկն, հեռագրեր են Սուլթանին թէ՝ արամադիր չեն կամաւ զէնքերնին թողուլ և եթէ Սուլթանն կամի քիչ ժամանակի մէջ իրենց կողմերու բոլոր Հայերն կրնան բնաջինջ ընել։ Դեսպանք ոսրա տեղեկացած և հաղորդած են իրենց կառավարութեանց յաւելլով թէ այս հեռագիրն կառավարութեան կողմէն ներշնչուած է։

Թուրք հասարակութիւնն յանչափս գրգռուած է. լուսաւորեալ երիտասարդ Թուրք մը երեկ կ'ըսէր. «եթէ ծրագիրն ստորագրեմք, Հայաստան մը ստեղծած կըլլանք, մեր կայսրութեան ձեռքէն պիտի ելնէ ոչ միայն մեր ամենաբերրի գաւառներն, այլ և գործօն ժողովուրդն. զի անդ պիտի հաւաքուի աշխատասէր տարրն. եթէ չստորագրեմք հաւանականաբար արեւելեան գաւառներն Ռուսիոյ կողմէն պիտի գրաւուին և յայնժամ Ֆռանսան Սիւրիոյ՝ Իտալիան Թրիպոլիթէնի՝ Աւստրիան Սելանիկի և գուցէ Անգլիան Պոլսոյ տիրել փորձեն, որով կորսուած ենք. մէկ փրկարար միջոց կայ միայն և այն է երեսփոխանական ծերակոյտի ժողովներն բանալ, լրագրական ազատութիւն հրատարակել և յայնժամ թէ դուք և թէ Եւրոպա գոհ մնալով չեն պնդեր իրենց պահանջն և մենք կը փրկուինք. սակայն դժբաղդաբար Սուլթանն երեսփոխանական ժողովի անունն իսկ լսել չուզեր, զի գիտէ թէ այդ ժողովին առաջին գործն պիտի լինի, զինքն և իւր արարքներն քննադատել...»

Հայք սպաննեցին Յունիս 2ին Տիգրան անուն վատ Հայն որ երբեմն իբր լրտես և փօլիս մեծ վատութիւններ գործելուն այժմ Բերայի մէկ մասին քօմիսէր կարգուած էր։

Թուրք հազարապետ մը փաքէի շոգենաւուն մէջ մի քանի Փռանսացիներ իւր սրովը վիրաւորելուն, նաւաստիք շղթայակապ Ֆռանսայի դեսպանին յանձնեցին, որ ռուս. կառավարութեան յանձնեց արժանաւոր պատիժ խնդրելով։

Թէրզհանէի մի քանի զինուորներ ի Բերա սուսերամերկ մի քանի Հայերու վըրայ կը յարձակին Հայերն պիտի ջարդեմք ըսելով՝ յորոց մին Լեւոն անուն կը զարնուի։ Թաղի պահնորդն վրայ հասնելով միւսներն կրնան ազատիլ։

Կարգուրաց Մամբրէն ալ վերջերս զարնուեցաւ յԻւսկիւտար։ չգիտեմ ինչ եղք ունեցաւ։

Այս կիւրակէ 9 Յունիս տօնուեցաւ Ազգ. Սահմանադրութեան 35րդ տարեդարձն յԱզգային Հիւանդանոցն Եէտի Գուլէ։ Սուլթանն օրեր առաջ մասնաւոր իրատէով մը արտօնած էր հանդէսի կատարումն։ Եպարքոսն ալ արտօնագրեր ղրկած էր ի Պատրիարքարան, սակայն միւս կողմանէ հրահանգ կար լրաքննութեան հանդէսն չծանուցանել։ Պատրիարք Հայրն յայտարարութիւններ փակցնել տըւաւ եկեղեցեաց դռներն ժողովուրդն արդէն պատրաստ էր, հարկ չկար մասնաւոր ծանուցման։ Պատրիարք Հայրն տեսնելով ժողովրդեան մեծ եռանդն չափազանցութեան առաջքն առնելու համար պէտք եղած հրահանգն տուաւ և կարգադիր մասնախումբ մի կարգեց։ Աւելի քան 25,000 հայեր, մեծ մասն գաւառացի, փութացին Եէտի Գուլէի հիւանդանոցն գալ. Ալէաթճեան պատարագեց, Պատրիարք Հայրն հասաւ ժամ 3ին (ը. թ.)։ Պատուոյ սեղան մը կար 120 անձանց համար, ընդ նախագահութեամբ Պատրիարք Հօր։ Ճաշըն սկսաւ ժամ 5ին, առաջին բաժակ Պատրիարք Հայրն առաջարկեց վասն օսմ. գերդաստանին և խորհիմաստ մաղթանքներ ըրաւ։ Երկրորդ բաժակ Ալէաթճեան Սըրբազան վասն Վեհ. Հայրիկի կենաց։ Երրորդ բաժակ Քաղաքական Ժողովոյ կողմանէ Թնկրեան Էֆ. վասն կենաց Պատրիարք Հօր։ Ժողովուրդն որ ճաշարահին շուրջն հաւածուած իւր կեցցէներով կը մասնակցէր սեղանակցաց, Պատրիարք Հօր անունն լսելով՝ կեցցէներու աղաղակով և ծափահարութեանց դղրդումով օդն թնդացոյց աւելի քան 10 վայրկեան, Պատրիարք Հայրն և ժողովականք ամենքն կ'արտասուէին։ Ահա ժողովրդեան մէջ ձայն մը կը բարձրանայ Սասունի յիշատակին բաժակ կ'առաջարկէ, եկեղեցական Հայր մի կը պարտաւորի առաջարկել բաժակն քամել. որոտընդոստ ծափահարութիւն սեղանակցաց և ժողովրդեան կողմանէ, կեցցե՛ն Սասունցիք, Սասունցւոց յիշատակն անմահ մնայ, Սասուն Հայուն ուխտատեղին պիտի լինի յայսմ հետէ, Սասունցիք իրենց արիւնով Հայն փրկեցին աղաղակներն կը բարձրանան, այս ցոյցերն վերջ չգտած, Սասունի երգն («Հայքի» մէջ հրատարակեալն) կը սկսի ժողովուրդն դրսէն, ամէն ոք կ'արտասուէ։ Մոսդիճեան Էֆ վերջին բաժակն կ'առաջարկէ երեսփոխանութեան կողմանէ վասն Սահմանադրութեան և ազգ. գործիչներու։ Ժողովրդեան կողմանէ Մըշեցի մը կուգայ Պատրիարք Հօր հետ իւր բաժակ զարնելով կը խմէ և կրակոտ ու կարճ խօսքեր ու մաղթանքներ ընելով կը հեռանայ։ Ծափահարութիւն և Սասունի երգ։ Սեղանն վերջ կը գտնէ։ Պատրիարք Հայրն սրահ կ'իջնէ, ժողովուրդն պարտէզ կը խուժէ կ'երգէ կ'ատենաբանէ և ապա Պատրիարքն կը պահանջէ։ Պատրիարք Հայրն պարտէզ կ'իջնէ 20,000 հոգիներ կ'ուզեն լսել և իրենց անձնուէր հովուի բառերն լափել։ Կարճ ու ազդու ատենախօսութիւն մ'ընելով կ'երթայ հիւրանոց։ Ժողովուրդն յայնժամ խումբ խումբ կը բաժնուի, կ'ատենաբանէ, կ'երգէ, կեցցէներով օդն կը թնդացնէ։ Վերջապէս ժամ 8ն է, Պատրիարք Հայրն կամի մեկնիլ. 120 երիտասարդք, Մշեցի, Բաղէշցի և Պոլսեցի, կառքին շուրջն բոլորած են, կամին ձիերէն հանելով իրենք լծուիլ և տանիլ Պատրիարքն մինչև Պատրիարքարան։ Կարգադիր մասնախումբն տեղեկացած էր և ուրախ էր, վերջի վայրկենին ժողովական մը կը ծանուցանէ Պատրիարք Հօր, որ բնականաբար համեստութեամբ կը մերժէ և կը յանձնարարէ ժողովուրդն համոզել, ժողովուրդն չի համոզուիր։ Պատրիարք Հայրն զԱլէաթճեան Սրբազանն կը ղրկէ որ յանուն Պատրիարքի և ի սէր Նորին մեծ դժուարութեամբ կը համոզէ ժողովուրդն։ Պատրիարք Հայրն մինչեւ պատրիարքարան ցոյցեր ընդունեցաւ ժողովրդեան կողմանէ։

Հանդիսավայրում ոստիկան չկար. որ և է ցաւալի դէպք չպատահեցաւ։ Վերջալուսին հազիւ բոլոր ժողովուրդն մեկնած էր։ Եւրոպացիներ որք ներկայ էին այս հանդիսի, վկայեցին թէ Եւրոպիոյ մէջ իսկ այսպիսի ցոյցերով հանդէս մը չէր կրնար առանց միջադէպի անցնիլ, և թէ հայ ժողովուրդն կատարեալ քաղաքակիրթ ժողովուրդ մ'է։ ԾՈՎ

ԲՆԱԳԻՐ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԻՆ

ԶՈՐ ՏԷՐՈՒԹԻՒՆՔ ՄԱՏՈՒՑԱԾ ԵՆ ԴՐԱՆ

Մարտ-Ապրիլ, 1895

(Այս ընդարձակ ծրագրին ինչ ինչ կարեւոր մասերուն թարգմանութիւնն միայն կուտամք։ ԽՄԲ։)

ՏԱՐԲԵՐ ԿԵՏԵՐՆ ԵՆ

1. Վիլայէթներու թուոյն պատահական զեղչումն։

2. Երաշխիք Վալիներու ընտրութեան համար։

3. Արձակումն քաղաքական յանցանօք դատապարտեալ կամ ի բանտի եղող Հայերուն։

4. Վերադարձ Հայ գաղթականաց կամ աքսորելոց։

5. Վերջնական կարգադրութիւն առկախ մնացեալ օրինական դատավարութեանց հասարակաց օրինաց դէմ գործուած ոճիրներու և յանցանաց համար։

6. Տեսչութիւն բանտից և հետազօտութիւն բանտային պայմանաց։

7. Բարձր Ցանձնաժողովոյ մի կարգումն գաւառաց մէջ բարեկարգութեան գործադրութեանը հսկելու համար։

8. Կ. Պոլսում մի մնայուն վերատեսչական Ցանձնախմբի մի ստեղծումն։

9. Սասնոյ, Տալորիկի և Դէպքերու զոհ եղած անձանց կորուստներուն փոխարինումն։

10. Կրօնափոխութեան վերաբերեալ խնդրոց կանոնաւորումն։

11. Հայոց չնորհուած իրաւանց և արտօնութեանց պահպանումն և ճիշդ գործադրումն։

12. Հայոց վիճակն Ասիական Թուրքիոյ ուրիշ գաւառաց մէջ։

(Ծրագրին 12 կետերուն վերայ բացատրութիւնք կան նախ, և ապա 13 գլխոց մէջ կանոններ զետեղուած են։ Մեք պիտի թարգմանեմք մի քանին համառօտիւ։)

Ծրագիր վարչական բարեկարգութեանց ներմուծելի յԱրեւելեան գաւառս Փոքր Ասիոյ, ի Ներկայ Նահանգսն Կարնոյ, Բաղիշոյ, Վանայ, Սեբաստիոյ, Մամուրէթ-իւլ-Ազիզի և Տիարպէքիրի։

Գլուխ Ա. Յաղագս Նահանգապետաց։

Յօդուած 1. Նահանգապետք կամ վալիք պիտի ընտրուին, առանց կրօնական խտրութեան, Պետութեան բարձր աւագանիէն, ուշիմութեան, ընդունակութեան և ուղղամտութեան լաւագոյն երաշխիքն ընծայող անձեր։ (Այս յօդուած բաւ է ամբողջին անհեթեթութիւնն ցուցնելու. ո՞ւր պիտի գտնեն աւագանւոյն մէջ ուղղամիտ, անկաշառակուրծ, արդարակորով մարդիկ որք հայ գաւառներուն վալիութիւն անեն, առանց պալատին հայատեաց քաղաքականութեան ծառայելու, այսինքն Պալատին հակառակ քաղաքականութեան հետեւելու յանդգնող։ Այդ բան անհնար է Օսմանեան հպատակի։ Պէտք է ուրեմն հետեւցունել թէ տէրութիւնք մեզ խաղցունել կ'ուզեն։ ԽՄԲ)

Յօդ. 2. Վալիներն, եթէ մահմետական են, պիտի ունենան քրիստոնեայ օգնական. և եթէ քրիստոնեայ են, պիտի ունենան մահմետական օգնական։

Գլուխ Բ. յաղագս Միւթէսարրըֆաց, Գլ. Գ. յաղագս գայմագամաց, Գլ. Դ. յաղագս նահիյէից. Նահիյէ մի առ նուազն 2,000 և առ առաւելն 10,000 բնակչէ պիտի բաղկանայ, և բաժանումներն այնպէս պիտի լինին որ, որքան որ հնար է, մէկ կրօնի ծառայող գիւղերն մի և նոյն նահիյէի մէջ բովանդակուին։ Իւրաքանչիւր նահիյէ պիտի կառավարուի միւտիրով մի, որում պիտի օգնէ ժողովուրդէն ընտրուած Խորհուրդն, 4էն մինչև 8 անդամէ բաղկացած։ Խորհուրդն իւր անդամից մէջէն պիտի ընտրէ զմիւտիրն և զօգնականն։ Մեծամասնութիւն կազմող դասուն պիտի վերաբերի միւտիրն, իսկ օգնականն՝ մնացած դասուն։ Ոստիկաններն, առանց կրօնի խտրութեան, պիտի ընտրուին ժողովրդէն, ի ձեռն Խորհրդոյն, և մինչ ի ծառայութեան են, քրիստոնեայ ոստիկանք չպիտի վճարեն զինուորական տուրքն։

Գլ. Ժ. Յաղագս Համիտիյէ զօրաց։ Սոքա պէտք է գործածուին և զետեղուին, կրթութեան արտասովոր ժամանակներ, կանոնաւոր զօրաց հետ միասին։ Սովորական ժամանակ, երբ չեն ի ծառայութեան, համազգեստ պիտի չկրեն և ոչ զէնք, և պիտի կրնան դատուիլ հասարակ դատարանաց մէջ։

Գլ. ԺԲ. Տասանորդաց տրոց հաւաքումն պիտի լինի նահիյէի միւտիրին ուղղակի իշխանութեան ներքև, և հարկահաւաքներն պիտի ընտրուին նահիյէի Խորհրդոյն ձեռքով։ Տասանորդաց վաճառումն ջնջուած է։ Ամեն վարչական կեդրոն, նահիյէէն սկսեալ, պիտի առնու իւր ձեռքով հաւաքուած տրոց գումարէն որքան որ հարկաւոր է իւր վարչական ծախքերն հայթայթելու համար, համաձայն ելմտացուցի մի զոր կառավարութիւնն պիտի որոշէ և ընդունի։ Նոյնպէս պիտի լինի վիլայէթին ծախուց համար, այդ ծախուց մէջ բովանդակեալ լինելով հանրային շինութեանց և հանրային կրթութեան ծախքերն։

ՆԵՐԿԱՅ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՊԱՐՏՔՆ

Ե

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Նախորդիւ ասացինք թէ հարկ է երեք ուղղութեամբ միանգամայն գործել որպէս զի մեր նպատակ իրացուի։ Ըստ ինձ մեծապէս կը սխալիմք եթէ կարծեմք թէ կարող եմք հասնիլ վախճանին զանց անելով զմին կամ զմիւսն այդ երեակ գործունէութեան։ Ներքին շինումն Հայաստանի և զարգացումն Հայոց նոյնքան կարեւոր է որքան յեղափոխական պատրաստութիւն և Եւրոպեան յուզումն։ Սակայն մահացու պիտի լինի մեր սխալ երբ գործեմք սա ենթադրութեամբ թէ գործունէութիւնք կրնան, անկախաբար, չասեմ ընդդիմաբար, յառաջանալով, նըպաստել փաստին ո և է աստիճանաւ։

Ցիրաւի այս երեք գործունէութիւնք որոշ և առանձին հանգամանք ունին և քաղաքագիտութիւն կը տրամադրէ որ նոքա պահպանեն իւրեանց երևութական հակասութիւնն առաջի աչխարհի և ի նպաստ փաստին։ Ճշմարտութիւնն այս է թէ հայ ժողովրդեան ներկայ վիճակն չի ներեր ամեն Հայու միօրինակ գործակցութիւնն։ Հայ ժողովուրդն տարբեր ազատութիւն, դիւրութիւն ունի ի Ռուսիա, ի Թուրքիա և յարտասահմանի։ Գործնական խնդիրն է օգտիլ այն ազատութեամբ որ գոյ է ուր որ Հայք կ'ապրին և ըստ այնմ ընդունիլ ձեռնտուութիւն ի նպաստ հայ նպատակին։ Զայս լաւ յաջողցնելու համար հարկ է իւրաքանչիւր կարգի գործչաց տպաւորել կարեւորութիւնն իւր մասնաւոր գործոյն։ Գործնական պայմանք կը տրամադրեն որ տնտեսական գործիչն ի Հայաստան և այլուր քարոզէ թէ բուն տըգիտութիւնն և անփութութիւնն Հայոց, և ոչ երկրին քաղաքական վիճակն, պատճառ է Հայոց թշուառութեան։ Հայ ժողովրդեան ստուար մասն ընդ լծով թըրքաց չէ կարող յայտնապէս մասնակցիլ յեղափոխական շարժմանց, սակայն կարող է պահպանել ազգին ներկայ իրաւունքներըն և յառաջացնել մշակութիւն և արթնութիւն մաց որոց ուղղակի կարեւորութիւն անուրանալի է։

Նմանապէս կը վայելէ եւրոպեան գործչին ամբողջովին համաձայնիլ յեղափոխիչին հետ նկատմամբ բուն պատճառին հայ վչտանաց, սակայն բոլորովին բաժնուիլ երբ խնդիրն գայ գործունէութեան։

Մինչդեռ ժողովրդային պայմանք հարկաւոր կ'անեն գործածել այսպիսի հակասական բուռն լեզու, ի շահ նպատակին, պէտք է սակայն չմոռնալ դորա երևութական բնութիւնն։ Պարտ է իւրաքանչիւր Հայու գիտակից լինել թէ ինչ միջոցաւ որ օգնէ Հայոց վերականգման, իւր գործն, մեծ կամ փոքր, գնահատելի է։ Ամեն հայ պարտի ըստ իւր կարի և ըստ պայմանաց երկրին ուր կը բնակի, աշխատիլ իւր մասնաւոր շրջանակում։ Պէտք է որ ամեն շրջանակի գործիչ յստակ գաղափար մի կազմէ նկատմամբ կարօտութեան մեր երկրին և չքամահրէ ո և է աննչան անհատ որ կը ճգնի կատարել զիւր խոնարհ բաժին։ Թուրքիոյ և Ռուսիոյ Հայոց մեծ մասն պարտին ոյժ տալ կրթական և տնտեսական միջոցաց և նախանձախնդիր պաշտպան լինել Հայ ազգի ղանազան իրաւանց։ Արտասահմանի Հայք պարտին առաջնորդել յեղափոխական մշակութիւնն և Եւրոպիոյ յուզումն։ Դիւանագիտական գործունէութիւն հնար է միայն ի ձեռն ներկայացուցչաց ազգին։ Սակայն ի վերոյ քան զայս ամենայն հարկ է որ ամեն հայ հայրենասէր քաջ համոզուի թէ իւր գործն կամ գործունէութիւն միայն մի մասըն է այն ընդհանուր շարժման որ այժմ կը մղէ զՀայս յառաջ։ Գործակցութեան պայ-

ման մ'է տեսնել ոչ միայն գկարեւորութիւն մի մասնաւոր գործոյ, այլնաև գաննչանութիւն և անզօրութիւն գորա եթէ առանձին առնուի։

Եթէ այս տարբեր գործունէութիւնք միանգամայն անհրաժեշտ են, պատճառ չկայ որ դոցա մէջ ներքին համաձայնութիւն և կապակցութիւն չգոյանայ։ Ընդհակառակն, եթէ այդ տարբեր կարգի գործոց տիրական փափաքն է յաջողութիւն հայ փաստին և ոչ այլ ինչ, պարտ է դոցա բացայայտ երևիլ կարևորութիւնն այդպիսի միութեան։ Եւ այս կապակցութիւն պարտի իրական լինիլ, և ոչ լոկ ձեւական, հիմնեալ այս համոզման վերայ թէ ամբողջ հայ ազգին զօրութիւնն յոյժ չափաւոր է և թէ իրօք տարբեր կարգի գործունէութիւնք են անիւքն մի և նոյն կառքին որոց համերաշխ ընթացքն անհրաժեշտ է հասանելոյ վախճանին։

ՏԻԳՐԱՆ ՍԻՒՆԻ

"ԲԱՐԵԿԱՄՔ ՀԱՅՈՑ"

ԵՒ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԿՈՉ ԱՌ ՀԱՅ ԳՐՈՂՍ

Տէր Խմբագիր,

Միացեալ Բարեկամք Հայաստանի (United Friends of Armenia) ընկերութեան ծրագրի մէջ կը կարդամք հետևեալ խօսքերը «... Նոքա (Հայերը) հարուստ գրականութիւն մը և հնագոյն ժամանակներէ ի վեր եկած աւանդութեանց և առասպելներու գանձ մ'ունին որ դեռ շատ քիչ ուսումնասիրուած է։

«Մ. Բ. Հ. ընկերութեան նպատակն պիտի լինի հետաքրքրել Ամերիկայի հասարակութիւնը Հայաստանի գրականութեան, առասպելներու, կրօնի, պատմութեան և ներկայ վիճակի հետ։»

Կարելի է և ոչ ազգ մը այնչափ սխալ ներկայացուած և սխալ հասկացուած է որչափ Հայն։ Հայոց Ամերիկայի ներկայ բարեկամներէն շատերը մի քանի տարի առաջ հայ ազգի գոյութենէն անգամ տեղեկութիւն չունէին։ Հարկ չէ մեզ հեստագօսել այն պատճառները, որ Հայերը՝ Արևելքի Եանքիները՝ այդչափ հեռու և անծանօթ պահեցին ամերիկացիներէն։ Ուրախ ենք տեսնելու որ վերցուած է այլ ևս այն քողը որ Հայերը կը ծածկէր Արևմտեան աչխարհէն։

Հաւատացած ըլլալով թէ Հայք արժանիք ունին Արևմտեան ազգաց համակրանաց և բարեկամութեան, բայց տեսնելով որ այս արժանիքը չէ գնահատուած և նաև գիտնալով թէ հայկական գրականութիւնը ունի գանձեր որք դեռ չեն բացուած արևմտեան ազգաց, Մ. Բ. Հ. ընկերութեանս նպատակի պահանջը գոհացնելու և այսպիսով երկու ազգերու բարեկամութիւնը ամրապնդելու թէ հայերէն և թէ անգլիերէն գրականութեան ծառայութիւն մը մատուցանելու համար ընկերութիւնս կազմած է մի յանձնախումբ որուն նպատակը պիտի լինի հայկական գրականութեան ընտրելագոյն գրքերը թարգմանել անգլիերէնի և հրատարակելով հայկական ճոխ դռները բանալ միւս քաղաքակիրթ ազգաց առջեւ, որով հիմնայատակ ընելով Հայոց նկատմամբ եղած սխալ հասկացողութիւնները պիտի ծանօթացնէ հայերը այնպէս ինչպէս որ են։ Արեւմտեան ազգաց չատ մը մեծահատոր ընդհանուր պատմութեանց մէջ չատ անգամ Հայոց անունն իսկ չկայ։ Եկեղեցական պատմութեանց ահագին հատորք երբեմն էջ մի անգամ չեն նուիրեր հայ եկեղեցւոյ մասին և նուիրողք իսկ անսայդ և սխալ տեղեկութիւններ կուտան, նոցա մէջ Գրիգոր լուսաւորչի և չատ մը երեւելի պատմական անձնաւորութեանց անուններն անգամ չեն գտներ, Վարդանանց ահեղ ու վսեմ պատերազմը և այլ նոյնանման երեւելի պատմական դէպքեր չեն յիշուիր անգամ, մինչդեռ սոքա ամենահետաքրքրական և կարեւոր պատմական իրողութիւններ են։

Մեր այս կարեւոր ձեռնարկին յաջողութեան համար անգլիագէտ Հայոց և առհասարակ հայ գրականութեան ծանօթ անհատներու աջակցութեան կը կարօտինք։

Հայ Գրականութեան ծանօթ անձեր կրնան օգնել մեզ թելադրութիւններ ընելով թարգմանութեան արժանի գրքերու և այլ գրութեանց մասին, նոցա անուններն և ծախու առնուելու համար գիմելու տեղեր և երբեմն պարունակութիւններն կարճ ի կարճոյ յայտնելով և նաև

ղրկել մեզ այն հայերէն գրքերու անուններն որոնք ուրիշ լեզուներու թարգմանուած են. նաև սիրով կ'ընդունուին հեղինակներու այն արժանաւոր գրքերն որ կը նուիրուին մեզ, որով երախտապարտ կը թողուն։ Եւ անգլիագէտ Հայերէ կը խնդրուի նաև արձանագրուիլ իբր թարգմանիչներ ընկերութեան տոմարին մէջ իրենց իսկական կամ գրական (pen name)անուններով և ղրկել իրենց հասցէները։

Մեր թարգմանութիւնք գլխաւորաբար երկու կարգի պիտի լինին, վիպական և դասական։ Վիպական թարգմանութեանց նպատակն պիտի լինի հետաքրքրել հասարակ ժողովուրդը, և դասականի նպատակը պիտի լինի հետաքրքրել գիտական հասարակութիւնը։ Վստահ ենք թէ հայ գրական աշխարհը և մասնաւորապէս լրագրութիւնը իր աջակցութիւնը պիտի նուիրէ այս կարեւոր գործին որով մենք քաջալերուած աւելի հաստատուն քայլեր պիտի առնենք մեր վսեմ նպատակի իրագործման համար։

Ի դիմաց Մ. Բ. Հ. ընկերութեան թարգմանիչ Ցանձնախմբի

Պոսթոն, Ատենապետ
Յունիս 8, 1895 Alice Ston Blackwell
Dorchester, Mass., U. S. A.
Ատենադպիր
Isabel C. Barrows
Boston, Mass. U. S. A.

ՄՇԱԿԻ ՄԷԿ ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆ Ի ՄԱՍԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

Հայրենիքից դուրս, ազատ Թիւրքայ ճնշումներից և գազանութիւններից, շրջապատուած լուսաւոր Ամերիկայի բոլոր բարիքներով,— հայ պանդուխտները Ամերիկայում, փոխանակ ոգևորվելու միութեան գաղափարով, փոխանակ ձեռք ձեռքի տրուած գործ կատարելու, — միմեանց միսն են ուտում, մղելով միմեանց դէմ անմիտ, վայրենի, միայն տգէտ ամբոխի յատուկ կռիւներ։

... Պանդուխտ Հայերի ատելութիւնը դէպի միմեանց այնտեղ է հասել, որ չատ անգամ նրանց ժողովները վերջանում են ծեծով, որը գուցէ միայն սաղ գար Էրզրումի կամ Բիթլիսի մէջլիսներում, և ոչ թէ Ամերիկայում տեղի ունեցող ժողովներում։

Իսկ հայ հոգեւորականը, որին յանձնված է իբր թէ հովելու այդ պանդուխտներու հօտը, և սէր քարոզելու նոյն ազգութեան պատկանող անհատների մէջ, իրան թոյլ է տալիս Ամերիկայում, եկեղեցու բեմ բարձրանալ և հրաւէր կարդալ, որ լուսաւորչական հայերը չը պէտք է խառնվեն բողոքական կամ կաթոլիկ հայերի հետ, պէտք է հեռու կենալ նրանցից, որովհետև նրանք հայութեան թշնամի են և վտանգաւոր...

Եւ այդպէս ուրեմն, Թուրքիայի խեղդող, անբարոյականացնող, այլանդակող մթնոլորդում մեծացած հայը ազատ Ամերիկայումն էլ մնում է նոյն,— միշտ նախանձոտ, միշտ անհամբերող դէպի իր եղբայրակիցը, միշտ սիրահար ինտրիգների և վայրենի կռիւների, իսկ հայ կղերը՝ միշտ ֆանատիզմի պաշտպան և կրօնական անմիտ մոլեռանդութեան կողմնակից...

Հայի պակասութիւնները մի այնպիսի երկրում, ինչպէս է Թուրքիան, որտեղ թէ օրէնքը, թէ իշխանութիւնը, թէ հասարակական կարգերը խեղդում են ամեն մի լաւ զգացմունք,— մեզ հասկանալի են. բայց նոյն Հայի նոյն պակասութիւնները մի այլ երկրում, ուր թէ օրէնքը, թէ հասարակական կարգերը դրդում են մարդուն լինել աւելի իդէալական, աւելի բարձր, աւելի անձնուէր,— այդ մեզ միանգամայն անհասկանալի է։

Ժամանակ չէ՞ մի՞թէ խղճահարվելու։

ՄՇԱԿ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆ

(ՄՇԱԿի խմբագրականին առթիւ)

Ամերիկեան Հայ գաղթականութիւնն ամեն իրօք կարեւորագունից մին է։ Թուով իբր 5,000 գոլով՝ գրեթէ հաւասար է եգիպտականին և Պուլկարականին, և ըստուարագոյն է քան Ֆռանսական և անգլիական և այլ Եւրոպական հայ գաղութքն։ Նիւթապէս՝ աւելի կը նպաստէ թրքահայ գաւառաց քան ուրիշ ոևէ գաղթականութիւն։ Տարին մերձաւորապէս 70 կամ 80 հազար ոսկւոյ գումար մի Ամերիկայի Հայոցմէ կը հոսի դէպ ի ներքին գաւա-

ռըս Հայրենեաց, առաւելապէս ի Խարբերդ, ուր շնորհիւ այս հոսանաց, Հայք հողատէր կը լինին և 100 կամ 200 ոսկին՝ որ մինչև 10 տարի առաջ հարստութիւն կը համարուէր, այժմ հասարակ կարողութիւն կը նկատուի։

Ուշադրութեան արժանի գաղթականութիւն մ'է ուրեմն ամերիկեան Հայոց, և ի դէպ է հարցնել թէ ի՛նչ տեսակ յառաջդիմութիւն կը գործէ այն և ո՛րքան յուսափայլ է նորա ընթացքն։

Իմացական տեսակէտէ դիտելով դիւրին է տեսնել թէ այս գաղթականութիւնըն յառաջադէմ ուղղութեան մէջ է։ Պարագայից անդիմադրելի բերումն է այս։ Հայաստանի յետնագոյն մէկ գիւղէն եկաւոր Հայն իսկ իւր արևելեան թմրութիւնն թօթափելու և իմացական կարողութիւններն գործածելու հարկին մէջ կը գտնէ ինքզինքն։ Պէտք է ուսանի անգլիերէն լեզուն, հարկ է որ ուսանի գոնէ անգլիերէն բառեր, ուսանի ինչ ինչ գործիներու անուններն և գործածութիւնն, բաղդատէ ամերիկեան և արևելեան դըրամներն, արհեստք, սովորոյթք, մարդիկն։ Ստորին միջավայրէ յանհունս աւելի զարգացած միջավայր մի անցած լինելով՝ թրքահայն իւր մտքի բոլոր ոյժն գործածել ստիպուած է Ամերիկայի մէջ անպիտան և անգործ չմնալու համար։

Նոր աշխարհ և նոր բաներ տեսնելու և դիտելու այս ստիպողական վարժութենէն զատ, կայ նաև ազգային և քաղաքական լրոց հետաքրքրութիւն, զի, շնորհիւ Թուրք կառավարութեան, օրն նոր լուրն նոր է, լուրեր մի քան զմի զարհուրելի։ Հայկական խնդրոյ վերաբերեալ լուրք և շարժմունք ազգային կարևորութենէ զատ ունին անհատական ևս կարևորութիւն մեր պանդխտաց համար, որոց մեծ մասին կենաց ապագայ ընթացքն, ամուսնանալու և ընտանիք կազմելու որոշումն կախակայուած կը մնան այդ մեծ Խնդրոյ լուծումէն։ Այս պատճառաւ հասարակ գործաւորք անգամ իրենց գործոց անձուկ սահմանէն դուրս՝ ազգային և քաղաքական անցից լուրերն իմանալ, կարդալ, մեկնել ստիպուած են, որ մեծապէս կ'օգնէ իրենց իմացական արթնութեան։

Այս պանդխտաց ստուար մեծամասնութիւնն սիրտ ի թունդ պիտի սպասէր մինչև որ դէպքերու բնական ընթացքն որոշէր հայրենեաց բաղդն և այնու վճռէր նաև զիւրեանցն։ Սակայն եղան սատ անդ մի քանիք ալ որք չժուժալով չէզոք անկալութեան, սկսան յուզուիլ և յուզել, փորձեցին գործօն մասնակցութիւն մ'ունենալ իրաց ընթացքին ազդելու։ Ոմանք հնարեցան վերադառնալ ի հայրենիս, այլք դրամ հանգանակեցին, հրապարակային ժողովներ ունեցան, գրաւոր դիմումներ արին, և հայրենասիրական ընկերութիւններ կազմեցին, կանոնագրութիւններ խմբագրեցին և գործեր ու մարդիկ քննադատեցին։ Այս ամենայն եղան առիթք իմացական անդուլ գործունէութեան։

Յիշել պէտք է թէ մեր Ամերիկայի պանդուխտ ազգայնոց ստուար մեծամասնութիւնն Խարբերդի գիւղերէն եկած է կամ ուրիշ գաւառական փոքր քաղաքներէ, ուր հազիւ դպրոցներ կը գտնուին, լրագիր քիչ անգամ կ'երևի, հրապարակային ժողով ոչ երբէք, և ուստի մտքերն թմրած վիճակում կը մնան ընդհանրապէս։ Այդպիսի բնակութիւններէ ելած յԱմերիկա եկած հայք, մնալով սատ մի քանի տարի, բաւական կը բացուին, գաղափարի նոր պաշար կը ստանան, և իրենց տեսութեան հորիզոնն կ'ընդարձակի. հայրենեաց անձուկ յարկին տակ մընացած իրենց եղբայրներուն բաղդատելով սոքա զգալի տարբերութիւն մի կը բերեն ի հանդէս։

Բայց այս տարբերութիւնն մեծ ու փառաւոր կարծել սխալ կը լինէր։ Այն որ հայրենի յարկին տակ և ազգային վարժարանում կրթութիւն չէ ստացած, պանդխտութեան մէջ իրեն ընծայուած առիթներէն օգտելու շատ ընդունակ չէ։ Կրնան շատերն օժտուած լինիլ իմացական զօրաւոր կարողութեամբ, բայց անմշակ և անկիրթ կարողութիւնն խակ պտղոյ նման է։

Այս նկատողութիւններն թոյլ կուտան մեզ ասել այժմ թէ ինչո՛ւ Ամերիկայի Հայ գաղթականութեան մէջ խօսք, ժողով, յուզմունք, ընկերութիւն շատ կան բայց ճշմարիտ խօսք, օգտակար ժողով, արդիւնաւոր յուզմունք և ազգաշէն ընկերութիւնք չեն տեսնուիր այնքան։

Առաջին պատճառն է տգիտութիւնն։ Գործ կատարելու եղանակն սովորաբար կը շփոթեն գաղափար տարածելու միջոցներուն հետ։ Բոլոր ժողովուրդն առ հասարակ կրնայ ի ժողով հրաւիրուիլ երբև

ի լսարան, որպէս զի ազգային, քաղաքական, բարոյական և այլ չափական խնդրոց վերայ ճառ լսէ, գաղափար առնու, լուսաւորի, խանդավառի։ Բայց երբ գործի, ձեռնարկի մի վերայ է խնդիրն, պէտք է այն ձեռնարկին կարեւորութիւնն զգացողներն առանձինն սկսին, իբրեւ փոքր կամ մեծ յանձնախումբ, և հետ զհետէ գրսէն յարմար անձինք ներս առնլով՝ կազմաւորին զգործն ի գլուխ հանելու համար։ Ամեն քաղաքակիրթ ժողովրդի մէջ այսպէս կը յաջողին այդպիսի ձեռնարկք։ Իսկ մեր մէջ, առտուն կանուխ ելնողն ի ժողով կը կոչէ բոլոր հայ գաղթականութիւնն, իւր մի քանի արբանեկաց օգնութեամբ յանկարծակիի կը բերէ խեղճ ժողովուրդն, ասելով թէ այս ու այն ձեռնարկն կայ առաջի, կ'ուզէ ժողովրդի հաճութիւնն, կամքն, քուէն։ Ամեն մարդ ազատ է խօսելու, վիճելու, և մթին մէջ կը սկսի պայքարն, որ կը շարունակուի յաջորդ ժողովոյ կամ ժողովներու մէջ ամենայն անկարգութեամբ ու գայթակղական միջադէպներով, և կը վերջանայ ցաւագին վիժմամբ։

Երկրորդ պատճառն է կէս-գիտութիւնն։ Ժողովրդին մէջ կէս ճշմարտութիւններ տարածուած են, կարգ մի ազնիւ և բարձր գաղափարներ ընդ ադօտ նշմարուած և կիսկատար ըմբռնուած են, որով յառաջ եկած է մտային վիճակ մի կասկածոտ և անկառավարելի։ Սխալ ըմբռնուած գաղափարաց կարգէն են «ազատութեան» և «հաւասարութեան» սկզբունքն։ Հին և միջին դարուց մէջ դասակարգք կային իրարու դեր ի վերոյ, և ստորին դասակարգն կը կրէր բարձրագունին ծանրութիւնը։ Արդի ժամանակաց մէջ այդ ամենայն ուղղուած են։ Հասարակ ժողովուրդն ազատ է ստացուածք և կին ունենալու, և գործելու իրեն սիրելի եղած արհեստն։ Բայց մեր մէջ կան շատեր որք՝ անցելոյն պատմութեան անտեղեակ՝ կը կարծեն թէ հաւասարութիւն կը նշանակէ թէ ամեն մարդ ունի հաւասար կարողութիւն, և երբ մեր ժողովոց մէջ խօսք լինի, օրինակի համար, Թադուհւոյն ուղերձ մի պատրաստելու մասին, գիտուն (ասել կ'ուզեմ տգէտ) մէկն կ'ատենախօսէ թէ ներկայ եղողներուն ամենն ալ «հաւասար են և ո՛և է մէկն իրաւունք ունի» անդամ ընտրուելու այն յանձնախմբին որ ուղերձն պէտք է պատրաստէ։ Եթէ ատենապետ պէտք է ընտրել, ժողովրդի մէջէն ո՞և է մէկն կրնայ ընտրուիլ, զի ամեն ոք հաւասար է։ Երբ հայրենասիրական գործոյ մի ձեռնարկել ուզեն, առաջնորդի, ղեկավարի պէտք չունի՞ն, զի ամեն մարդ հաւասար գոլով՝ ո և է անհատներ կրնան պատոնի կոչուիլ։ Ժամանակ մի կար որ կուրօրէն կը հետեւէր ժողովուրդն առաջնորդի, յաճախ կոյր առաջնորդի, իսկ այժըմ հասած է ժամանակ մի յորում կը կարծեն թէ ո և է բարձր կրթութեան կամ փորձառութեան տէր մէկուն պէտք չունի իրենց առաջնորդելու համար։ Աշխարհիս քան զամենայն քաղաքակիրթ և հզօր ազգաց կուսակցութիւններն ու ընկերութիւններն մեծ առաջնորդներով կը ղեկավարին, Կլատսթոն առաջնորդ, leader, կը լինի այն մեծ ազատական կուսակցութեանն որ այնքան ուրիշ նշանաւոր մարդիկ կը պարունակէ իւր մէջ, Սալսպէրի պահպանողական կուսակցութեան ղեկավարն է· բայց մեք Հայքս, կ'ուզեմք այնպիսի վիճակ մի յորում ամենքս ալ առաջնորդ կամ մեծ լինիմք միանգամայն՝ եթէ կարելի է, եթէ ոչ՝ կարգաւ չարաթէ չարաթ։

Տրամադրութեան այս վիճակին մէջ ճշմարիտ կազմակերպութիւն և հայրենի դատին իրական և ապդու ծառայութիւն չէ կարելի սպասել։ Ո՛վ որ ժողովրդի թիւր ըմբռնումներն փայփայէ և զնա գովէ, կրնայ համակրելի լինիլ և գէթ ժամանակի մի համար առաջնորդի աթոռ բազմիլ, բայց ո՛վ որ ժողովրդի սխալ և միակողմանի ըմբռնումներն ուղղել կամ ամբողջացունել ջանայ, իբրեւ հպարտ մարդ անհամակրելի կը հանդիսանայ։ Գաղթական ժողովուրդն ա՛յն աստեն միայն պիտի կրնայ օգտակար կերպով օգնել հայրենեաց ազատութեան երբ ունենայ կամ ընդունի անկեղծ և կարող առաջնորդ, կազմաւորիչ և ղեկավար գըլուխ։ Ի հարկէ կոյր և լուսաւոր, կեղծ և անկեղծ, յեղյեղուկ և սկզբունքի ծառայող, փայլասէր և հայրենանուէր առաջնորդներ կը մրցին հրապարակի վերայ, և ժողովրդի ողջմտութեան և լրջութեան աստիճանին համեմատ կը լինի ելքն այդ մրցմանց։ Կուսակցութիւն մի, ընկերութիւն մի կ'ունենայ այնպիսի գլուխ որում ինքն արժանի է։ Երբեմն ալ ժողովրդի

ողջամիտ մասն գերագոյն ճգամբ կ'ընտրէ արժանի գլուխ մի, յաղթելով յետադէմ մասին։ Պատրիարք Իզմիրլեան այդ կերպով ընտրուեցաւ՝ Աշըգեանի յաջորդելու։ Խրիմեան Հայրիկ այդ կերպով ընտրուեցաւ կաթողիկոս՝ փոխանակ Աշըգեանի։ Երբ արտասահմանի մէջ ճշմարիտ և յուսամիտ հայրենասիրաց թիւն աճի, յայնժամ օգտակար գործունէութեան շրջանն պիտի սկսի ճշմարիտ կազմակերպութիւն և ճշմարիտ առաջնորդութիւն հնար լինելով։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թերթիս երկու վերջին թիւերով ամենայն պարզութեամբ ծանուցուած է Ամերիկայի ազգայնոց թէ, որպէս զի կարենայ 16 երես ամիսն երկու անգամ հրատարակուիլ, կարօտ է 200 նոր բաժանորդաց կամ կարեւոր հանգանակութեան։ Մինչեւ ցարդ հազիւ տասնեակ մի բաժանորդք աւելցան։ Մեր գաղթականք այս պէտք կրնան առանց ոև է դժուարութեան, մէկ շաբթու մէջ, լնուլ, եթէ կամենան. եթէ ոչ՝ կարող են, առանց ոև է ջանքի, միայն անհոգութեան շնորհիւ, իրենք իսկ այս թերթ դադրեցունել այս երկրի մէջ ուր թուրք կառավարութեան ոյժն չի հասնիր։

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Մեզի կը տեղեկագրեն թէ Յունիս 22 ի շաբաթ երեկոյին նշանաւոր հայ ժողով մ'է եղեր Նիւ Եորքի մէջ, դարձեալ Հըրանդ Քիրէչճեան անուն երիտասարդին և իւր միքանի ընկերաց առաջնորդութեամբ։ Միայն թէ պայքարի նոր նիւթ են բերեր այս անգամ ժողովրդին, որոյ կուսակրօնական բնազդմունք բաւական սնունդ գտան վերջերս շնորհիւ Պարոնին փորձառութեանց։ Խնդիրն այն էր թէ երեք Սասունցիներն, որք Լոնտոն էին վերջերս, պէ՞տք է հրաւիրել այցելել Ամերիկա։ Այդ դոյն խնդիր, երեք եօթնեակ յառաջագոյն, Պատ. Կրինի հետ խորհրդակցութեամբ, ի քնին առնուած էր և այլ և այլ պատճառներով անյանձնարարելի նկատուած էր։ Պ. Քիրէչճեան ալ ներկայ էր յայնժամ և համոզուած կ'երեւէր։ Բայց ահա յանկարծ հրաւէր կուգայ գաղթականութեան որ ի ժողով փութան և Սասունցիներն Ամերիկա բերելու ձեռնարկեն։ Տք. Այվազեան, և ուրիշ մի քանիներ կը պատմեն թէ ինչ պատճառներով զՍասունցիներն հրաւիրել իմաստութիւն չէր համարուած, և ժողովուրդն կը համոզուի։ Բայց ժողովք, ինչպէս սովորութիւն է, կը ժխորի. երկու երեք հոգիք միանգամայն կը խօսին, առանց խօսք առնելու, կը գոչեն, ոտքի կ'ելնեն, բունցի և աքացի հարուածներ կը պատրաստուին բայց իրօք կռիւն տեղի չունենար, այլ միայն Պ. Քիրէչճեանի ականջին հնչող վերջին խօսքն կը լինի Այվազեանի գոռալն «հերիք է, հերիք։» Պարոնն գլխիկոր և ցաւագին խոյս կուտայ։ Ժողովուրդն սրահէն դուրս կ'ելնէ, բայց ի դուրս կը մնայ դեռ ժամ մի և կը շարունակէ վիճիլ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆ ՋԱՐԻՆ ՔՈՎ

Յունիս 12ին ներկայացաւ Վեհ. Հայրապետն Կայսեր և Կայսրուհւոյն Ռուսիոյ յարքունիս Բէթէրհօֆի, ուր Նմին Սրբութեան եղաւ մեծարանաց և ուշադրութեան ամեն ցոյց։ Կաթողիկոսն և իւր հետեւորդք ուղեւորեցան ի Բէդէրհօֆ յատուկ դաշլճական կառօք, արարողապետի մի և պալատական ազնուականի մի ընկերակցութեամբ։ Հետեւորդքն էին մի Հայ արքեպիսկոպոս և մի քանի սեւազգեստ վարդապետք, որոց երկուքն էջմիածնէն եկեղեցական դրօշակներ կը կրէին։ Բէդէրհօֆի կայարանէն յարքունիս գնացին պետական կառքերով, կաթողիկոսն բազմելով առանձին կառքի մի մէջ զոր կը քաշէին վեց ձիեր։ Ի Մուտս արքունեացն զկաթողիկոսն ընդունեց Պալատին Նախարարին օգնականն, ի բացակայութեան առաջնոյն, և այլ բարձրաստիճան աւագանի։ Որովհետեւ կաթողիկոսն կը խօսի միայն Հայերէն, թրքերէն և պարսկերէն, թարգման եղաւ նմա խորհրդական Եզեան, որ ևս հայազգի մ'է։

Ուղերձն զոր ներկայացոյց կաթողիկոսն առ Ջարն, հայերէն էր ռուսերէն թարգմանութեամբ հանդերձ, և ուժգն-

օրէն կ'ակնարկէր Թրքահայոց տխուր վիճակին։ Կ'աղաչէր զՀարն վախճան տալ սեղանաց սրբապղծմանն, մանկանց խողխողմանն, անմեղ կանանց անպատուըմանըն և զՀայս այդ երկրէն ջնջելու դրութեանն։ Նորին Կայսերական Վեհափառութիւնն ընդունեց զՈւղերձն (որ կարդացուեցաւ) յոյժ քաղցրութեամբ, և պատասխանեց Կաթողիկոսին թէ ինքն կը համակրէր նորա կրօնանցաց և թէ պիտի անէր ամեն ինչ որ հնար էր։ (ԹԱՅՄՁ)

Կ. Պոլիս- Յունիս 16. Սուլթանն, իմանալով թէ Բրիտանական Դահլիճն ժողովուած էր ի նկատել Դրան պատասխանըն նկատմամբ բարեկարգութեան ծրագրին զոր Անգլիա՝ Ֆռանսա և Ռուսիա մատուցած էին, երէկ հեռագրեց առ Ռիւթէմ փաշա, Թրքական դեսպանն ի Լոնտոն, հրահանգ տալով նմա խնդրել Լորտ Բէմպըրլիյէ, նախարարէ արտաքին գործոց, օրաձգել որոշումն այս խնդրում։ Կ'ասեն թէ Դուռն երէկ յանձնեց երեք դեսպանացն նոր և գոհացուցիչ պատասխան մի, զիջանելով եւրոպական վերահսկողութեան ի հայ գաւառս, պայմանաւ որ երեք տարի միայն տեւէ այդ։

Պէռլին, Յունիս 17. Սովորաբար լաւ իրազեկ «Բէօլնիշէ Ցայթունկ» կ'ասէ թէ յարաբերութիւնք ընդմէջ Թուրքիոյ և Պուլկարիոյ խիստ ձգտեալ են։ Թրքական գնդեր կը խաղան դէպ ի պուլկարական սահմանագլուխն։ Քանի մ'օր առաջ նոյն լրագիրն ասաւ թէ Պուլկարիա ծանուցած էր դիւանագիտաց թէ Հայաստանի մէջ տեղի ունեցած դէպքերու հետեւանօք, Պուլկարիա՝ ժողովրդական շարժումէ մղուած՝ զինուք պիտի միջամտէր թերևս Մակեդոնիոյ կրօնական կնճռոտութեանց։

Քօլոնեը, Յունիս 18. Քօլոնեան կաղէթն հեռագիր մի կը հրատարակէ Բեդրպուրկէ որով կը ծանուցուի թէ Հայոց կաթողիկոսն տեսակցելով Իշխան Լոպանովի հետ, երէկ, խնդրեց 40,000 հայ ապաստանելոց համար երկիր ի Կովկաս, և իւր խնդիրք ընդունուեցաւ։

Կ. Պոլիս. Թուրք կառավարութիւնն իւր նոր պատասխանով առարկութիւն կը յարուցանէ ծրագրին դէմ, և կը պնդէ թէ Պէռլինեան դաշնագիրն իրաւունք չի տար տէրութեանց պահանջել Դռնէն եբաշխիք որպիսի կը պահանջէ երից դեսպանաց ծրագիրն։ Սակայն այն տպաւորութիւն կը տիրէ թէ այս պատասխանն համարժէք է տափակ մերժողութեան։

Լոնտոն, Յունիս 20. Բեդրպուրկէ յղուած հեռագիր մի կ'ասէ թէ ռուս կառավարութիւնն հաղորդագրութիւն մի ընդունած է անգլիական կառավարութենէն որ իմաց կ'անէ Զարին կառավարութեան թէ դիտաւորութիւն ունի նաւային ցոյց մի գործել ի Կ. Պոլիս։ Բեդրպուրկում լուր առնուած է ուրիշ աղբիւրէ թէ Անգլիոյ դեսպանն Սրբ Ֆ. Բէյրի գաղտնապէս դաւ կը լարէ հայ պատրիարքներուն հետ և թէ անգլիական հայասէր յանձնախումբն բազում զէնք կը հայթայթէ Հայոց, և այդ պատճառաւ ռուս կառավարութիւնն, զօրք յղելով ի Կարս, կը պատրաստուի շարժման առջեւն առնլու։ (Այս հեռագիրն, որպէս պիտի գուշակեն ընթերցողք, չարալուր Հէրալտին եկած է։)

Կ. Պոլիս, Յունիս 21. Սուլթանին դէմ մի դաւակցութիւն յերև հանուած է Բանկալթիի զինուորական ուսանողաց մէջ։ Երեսուն ուսանողք ձերբակալուած են։

Յունիս 21, Ուօշինկթօն. Պետական Քարտուղարն նշանակած է զԹօպէրթ Ս. Զիլթոն, որդի, երթալ ի Կարին, Հայաստան, և հաստատել անդ զՄիացեալ Նահանգաց հիւպատոսութիւնն, ըստ որոշման վեհաժողովոյն։ Միւս հայկական հիւպատոսութիւնն Խարբերդի համար որոշուած էր, ուր առ այժմ այդ պաշտօն կը վարէ Ուիլեամ Ճելէնի Հանթը։

Աներկբայ, կ'ասէ Թրիպիուն, Ռուսք աւելի ազատութիւն կը վայելեն Ներկայ Զարին իշխանութեան ներքև քան իւր նախորդին։ Ի Մոսկուա քանի մի հազար կառապանք գործադուլ են արած, ոչ թէ թոշակի յաւելում պահանջելու նպատակաւ, այլ ի սակիպել ոստիկանական իշխանութիւնն ջնջել ինչ ինչ անհանդուրժելի կանոններ վերաբերութեամբ փողոցային երթեւեկութեան։ Ցայսվայր կառավարութիւնն միջամուխ եղած չէ գործադրողաց, որք քաջ կազմաւորեալ են ըստ Ամերիկեան դրութեան՝ կեդրոնական Յանձնախմբով մի։

Պուլկար եպիսկոպոս Մլատենոֆ ի Կ. Պոլիս այցելութեան ատեն աներևոյթ ե-

դած է Տարտանելի ասիական կողմն, որոյ վասն չատ գրգռում կը տիրէ ի Պուլկարիա և ի Մակեդոնիա։

Ֆրէզնոյէն կը գրեն վեզ.— «Տեղւոյս ընկերութիւնն սկսած է գործունէութեան մէջ մանել. 5—6 շաբաթէ ի վեր խօսարանի դրոսթիւն մի հաստատած է ուր վիճաբանութիւն կը լինի զանազան խնդրոց վրայ. առաջին խնդիրն կամ նիւթն եղաւ թէ օգտակար ու կարեւո՞ր է գաղթական հայերուն կեդրոն մի ունենալն. աւելորդ է ըսել թէ ժխտական կողմն (որ ձեւապէս միայն կար,) չարաչար յաղթուեցաւ։ Ուրիշ խնդիր մ'ալ այն եղաւ թէ ներկայ պարագայից մէջ հայ պանդուխտք պէ՞տք է վերադառնան Հայաստան։»

Քոնքօրտէն կը գրէ մեզ Տիար Ց. Ն. Մարդարեան.— Ներկայիս կը ղրկեմ խմբագրութեանդ եօթ տոլար ու կէս, որուն վեց տոլարն հանգանակուեցաւ մեր տան անձերէն, և մէկ տոլարն բաժնեդիր է վեցամսեայ։ Արդարեւ մենք Հայերս չատ ծոյլ կը չարժինք մեր սուրբ դատին համար, և մեր մատին ծայրով չեմք դպչիր ծանր բեռներուն որոնցմով բեռնաւորուած են մեր գործիչներն։ Ընդունեցէք մեր չնչին օգնութիւնն։ Կը մաղթեմք կարողութիւն մեր բոլոր աշխատողաց և ազատութիւն մեր տառապեալ Հայաստանի։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ա

THE VOICE OF THE ARMENIAN REVOLUTIONISTS

Upon the Armenian Problem
and how to solve it
by Avedis Nazarbek

Հայ Յեղափոխականաց Ձայնն Հայկական Խնդրոյն վերայ և թէ որպէս պարտ է լուծել զայն։ Աւետիս Պէկնազարեան, (Խմբ. «Հնչակի», Հայ Յեղափոխական Կուսակցութեան կեդրոնական բերանի։) Լոնտոն, 1895. ութածալ երես 16։

Անգլիերէն այս տետրակ գրուած է խոհական և չափաւոր լեզուաւ. և կը բերնայ նպաստաւոր տպաւորութիւն թողուլ օտարական ընթերցողաց վերայ նը-կատմամբ հայ յեղափոխականաց։ Այս տետրի կեդրոնական գաղափարն սա է թէ Հայաստանի մէջ պէտք է հաստատել համայնական ինքնօրինութիւն (communal autonomy)։ Գաղափարն համակրելի է։ Տէրութեանց ծրագիրն ևս այդմ կը մերձենայ ի պահանջելն որ նահիյէներն այնպէս բաժնուին և սահմանուին որ համակրօն տարրն պարունակեն։

Բ

ENGLAND'S RESPONSIBILITY TOWARDS ARMENIA

by

Rev. Malcolm MacColl. M. A. Canon of Ripon

Անգլիոյ պատասխանատուութիւնն հանդէպ Հայաստանի։ Ութածալ 128 երես։ Հայոց հարստահարութեանց դժընդակութիւնն այնպիսի ուժգնութեամբ կը նկարագրէ, իրողութիւններն հիւպատոսական աներկբայելի տեղեկագիրներէն կոչելով, որ ընթերցող անգլիացին հարկաւ կը կասպի թուրք կառավարութեան դէմ և կ'ամաչէ իւր իսկ անտարբերութեան վերայ։ Այս գիրքն պէտք է ծաւալել ի Միացեալ Նահանգս ամենայն փութով։ Գինն է 75 սենթ։ Դիւրութեան համար կրնան մերայինք դիմել առ Տ. Ա. Այվազեան։

Dr. A. Ayvazian
424 W. 57th St., NEW YORK, N. Y.

ՄԱՐԶԱՐԱՆ

ՄԱՐԶԱՐԱՆն 117 երեսէ բաղկացած աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Գասպարեանի գրչէն, տպեալ Նիւ Եորք, Մ. Ս. Գ.ի տպարանում, 1892ին։ Առաջին մասին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ է և 36 ձևերէ կամ պատկերներէ, կ'ուսուցանէ թէ զինուորն ինչպէս պէտք է կայնի, բարեւէ, քալէ, վազէ, շրջան անէ, սուին, հրացան բռնէ ու գործածէ, կրակէ անհատաբար, շարքով, ծնրադրութեամբ, գետնամած ևն. ևն.։ Երկրորդ մասում կ'աւանդէ «ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ ՄԱՐՏԱԳԻՏԱԿԱՆՔ։» Այս գիրքն կարդալ և ըստ այնմ իրենք զիրենք մարզել պարտին մեր երիտասարդք։

Ed. LEGOLL
ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու Նիւ Եորք
26դ և 27դ Փողոցներուն միջն
Դեղագրեր կը շինուին խնամով



Misak M. Philip,

Mechanical Engineer.

25 Monroe St., New York, N. Y.



A 212



A419

Պատիւ ունիմ ծանուցանել թէ ճարտարապետ շոգեշարժ մեքենայից լինելով, կը զբաղիմ նաև ժամագործութեամբ երեկոյներն ժամ 8էն մինչեւ 11 ժամացոյց նորոգելու։

Նաև կը գտնուին քովս ամեն կարգի նոր ժամացոյցներ ալ ոժան գներով։ Անոնք որ կը փափաքին աղէկ ժամացոյցի մը տէր ըլլալ առանց որս լինելու խաբեբայ Հրէից և այլ ազգաց որ կրկնապատիկ գինն կը պահանջեն, կրնան դիմել մեր հասցէին։

Նաև կ'ուզեմ ծանուցանել հայ երիտասարդաց որոնք մտադիր են Ամերիկայի շահաւոր և Հայաստանի համար օգտակար արհեստ մը սովրիլ, կարող եմ հետեւեալ արհեստներն քիչ ծախքով և կարճ ժամանակի մէջոցաւ լիովին դասաւորակել։— գործնական և ուսումնական շոգեշարժ մեքենագործութիւն— ժամագործութիւն— լուսանկարութիւն— լուսանկարական բացասական և դրական թուղթի և ապակի շինելու նորագիւտ կերպը— Կրակավառութիւն— և թէ ի՞նչպէս գործարաններուն մէջ գործ կարող են ստանալ և յառաջադիմել առանց Թրքէն ժառանգ ինկած գիւտն (կաշառք) գործածելու։

Իմին 16 տարուայ ունեցած փորձառութիւնս և Երկրագնդին չորս կողմը շրջագայելս մեծ երաշխիք մը է ինձ դիմողներն գոհացուցանելու։

ՄԻՍԱՔ Մ. ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ

ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ուէ կողմ երթալ ուզողներուն։ Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու։ Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակնին կը գնեն մէկէն, որով թէ՛ ածան գնով պիտի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին։ Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս շատերուն եղած է։ Ամենէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԻՆՋ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք։ Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ'երթան. լաւ կերակուր և գինի կուտան, և ածան գնով։

Նաև մեր տանց ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն։ Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն ածան կուտանք։ Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և շատ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ'է։ Ստակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ուէ կողմ խրկել ուզողներ կամ տեղեկութիւն ուզողներ կրնան դիմել հետևեալ հասցէին։

Նամակներու պատասխանները չուտով կը գրուին։

D. M. SHOOSHAN
41 Exchange St., Worcester, Mass.

BUSH & Co.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

(Հաստատեալ ի 1849)

65 Front St., Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

PATENTS
CAVEATS, TRADE MARKS
COPYRIGHTS.

CAN I OBTAIN A PATENT? For a prompt answer and an honest opinion, write to **MUNN & CO.**, who have had nearly fifty years' experience in the patent business. Communications strictly confidential. A **Handbook** of Information concerning **Patents** and how to obtain them sent free. Also a catalogue of mechanical and scientific books sent free.

Patents taken through Munn & Co. receive special notice in the **Scientific American**, and thus are brought widely before the public without cost to the inventor. This splendid paper, issued weekly, elegantly illustrated, has by far the largest circulation of any scientific work in the world. $3 a year. Sample copies sent free.

Building Edition, monthly, $2.50 a year. Single copies, 25 cents. Every number contains beautiful plates, in colors, and photographs of new houses, with plans, enabling builders to show the latest designs and secure contracts. Address

MUNN & CO., NEW YORK, 361 BROADWAY.

MORRISON & Co.

ԴԵՐԶԱԿ

106 Fulton St., New York

Ամառուան համար ընտիր ձեռք մի զգեստ, ձեր վերայ յատկապէս ձեւուած չափուած կը շինեմք 16 տոլարի, իսկ սառնազգեստ (փանթոլոն) 4 տոլարի։ Զեւին կատարելութիւնն ու ճշդութիւնն կերաշխաւորենք։

ՀԻՆ ԱՇԽԱՐՀՆ ՓՈՂ ՈՒՂԱՐԿԷ ԱՄԷՐԻԲԷՆ ԷՔՍՓՐԷՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՆԻ ՕՐՏԸՐՈՎ

(American Exprss Co'.s Money Order)

Կատարելապէս ապահով են։ Այդ ընկերութեան ո և իցէ օֆֆիսէն կրնաս առնուլ հետևեալ պայմաններով վճարելի յԵրոպա.

Ոչ աւելի քան	5	տոլար	5	սենթ
,, ,, ,,	10	,,	8	
,, ,, ,,	20	,,	10	
,, ,, ,,	30	,,	12	
,, ,, ,,	40	,,	15	
,, ,, ,,	50	,,	18	
,, ,, ,,	100	,,	30	

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ